ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնք

Տոռոզյան փ.2ենք 7 nor-hachn-meriya@mail.ru

Հեռ. 0224 4 25 50

Նոր Հաճըն համայնքի ղեկավար

Գագիկ Մաթևոսյանին

Ձեկուցագիր

Հարգելի պարոն Մաթևոսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ուսումնասիրելով 2023թ. ընթացքում ավագանու թվով 1
նիստերի արձանագրությունները, պարզվել է, որ ավագանու անդամ հանդիսացող
<<Վարդան Պապյան կուսակցությունների դաշինք>> խմբակցության անդամներ Վարդան
Պապյանը, Նարեկ Ստեփանյանը և <<Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն>>
խմբակցության անդամ Էմմա Մարգարյանը անհարգելի պատճառով բացակայել են
ավագանու նիստերից և քվեարկությունների ավելի քան կեսից, մասնավորապես՝ Վ
Պապյանը բացակայել է թվով 10 նիստից, Ն.Ստեփանյանը՝ 11 և Է. Մարգարյանը՝ 8:

Համաձայն ՏԻՄ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ավագանու անդամ
լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամներ
ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթակա
նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կա
քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Առդիր՝ 2023թ-ի ավագանու նիստերի թվով 11 արձանագրությունների պատճենները:

Ձեկուցող՝ **աշխատակազմի քարտուղար**

Արման Սմբատյան